ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր
Դ.Վ.Հարությունյան
13 հունիսի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԷՐԻԿ ՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՂՄԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ Ը.00.03 - «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վարքագծային ֆինանսներն ընդունում է մարդու իռացիոնալությունը, շուկայի անկատարությունը և փորձում բացատրել նմանատիպ երևույթները, որով էլ տարբերվում է ավանդական ֆինանսներից: Վարքագծային ֆինանսների ուսումնասիրությունը գիտամեթոդական տեսանկյունից ավելի է կարևորվում հատկապես ընթացիկ ժամանակաշրջանում, երբ դրա զարգացմանը նպաստելու համար Նոբելյան մրցանակի են արժանացել մի շարք տնտեսագետներ և հոգեբաններ:

ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի ու ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները բավարար խորությամբ հետազոտված չեն՝ բազմակողմանի հետազոտություն իրականացնելու օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ինչպես գիտամեթոդական, այնպես էլ գործնական մակարդակներում: Վերջինը կարող է նպաստել ՀՀ-ում ֆինանսական գրագիտության բարձրացմանը, ֆինանսական վարքագծի, առաջացող ռիսկերի և հնարավորությունների գնահատման և կառավարման բարելավմանը: Դրանց շնորհիվ բնակչությունը կարող է առավել արդյունավետ կառավարել իր ֆինանսական հոսքերը, ինչը, իր հերթին, կարող է ազդեցություն ունենալ ամբողջ տնտեսության վրա: Ներկա

ժամանակաշրջանում, երբ պարբերաբար ի հայտ են գալիս բազմապիսի անկանոնություններ կամ անհաղթահարելի ուժեր, հատկապես պատերազմական գործողությունների դրսևորմամբ, բնակչության ֆինանսական վարքագծի ուսումնասիրության անհրաժեշտությունն ավելի է ընդգծվում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի ուսումնասիրության միջոցով առաջարկել դրա բարելավման ուղիներ:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել վարքագծային ֆինանսների էությունն ու կապն ավանդական ֆինանսների հետ,
- մշակել բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման վերաբերյալ վիճակագրական տվյալներ,
- գնահատել ավանդների ներդրման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- գնահատել վարկավորման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- գնահատել ֆինանսական վարքագիծը որոշող վարքագծային գործոնների ազդեցությունը,
- բացահայտել բնակչության ֆինանսական վարքագծին առնչվող առկա հիմնախնդիրները, մշակել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների մոտեցումներ:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բնակչությունն է, ինչպես նաև նրանց ֆինանսական վարքագիծը: Հետազոտության առարկան ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրներն են՝ պայմանավորված ֆինանսական և ներդրումային որոշումների կայացման վրա ազդող գործոններով ու ֆինանսական վարքագծի բարելավման անհրաժեշտությամբ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը և նորույթը: Հետազոտության գիտական արդյունքը ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրների վերաբերյալ նոր մոտեցումների մշակումն ու ներկայացումն է, որից գիտական նորույթ են հետևյալները.

1. ավանդային ներդրումների վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների խնայողության վարքագծի և ավանդների վրա ազդող գործոնները, այդ թվում՝ միջին ամսական անվանական աշխատավարձ, սպառողական գների ինդեքս, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվ, ԱՄՆ դոլարի փոխարժեք, շուկայական տոկոսադրույք, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,

2. վարկավորման վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների վարկերի վրա ազդող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնները, որոնք դիտարկվել են ավանդների դեպքում, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,

3. գնահատվել են ՀՀ-ում ֆինանսական գրագիտության, ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության ազդեցությունը ֆինանսական վարքագծի վրա, նշված գործոնների միջև կապի ուղղությունն ու բնույթը,

4. հետազոտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կապը սոցիալ-տնտեսական տարբեր հիմնախնդիրների հետ, բացահայտվել կապի բնույթը, մշակվել և առաջադրվել են մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ներդրումային և ֆինանսական վարքագծի բարելավմանը սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունում քննարկված տեսություններն ու մոտեցումները կարող են օգտակար լինել վարքագծային ֆինանսների դասավանդման ժամանակ և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս: Վերլուծության շնորհիվ ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել բնակչությանը, ֆինանսական ինստիտուտներին, ֆինանսական խորհրդատուներին, պետական տնտեսական քաղաքականություն մշակողներին:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Ատենախոսություն ունի որոշակի թերություններ, որոնցից կցանկանայինք նշել հետևյալները.

1. Աշխատանքում մեջբերվում է «ֆինանսական վարքագիծ» և «վարքագծային ֆինանսներ» հասկացությունները: Տրվում են այդ եզրույթների սահմանումները, բայց չի պարզաբանվում որն է ավելի լայն հասկացություն:
2. Էջ 6–ում նշվում է հետևյալ միտքը. «Ուսումնասիրության առարկան ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրներն են՝ պայմանավորված ֆինանսական և ներդրումային որոշումների կայացման վրա ազդող գործոններով ...»: Ներդրումային որոշումները ֆինանսական չե՞ն: Առավել շահեկան կլիներ, եթե շարադրվեր հետևյալ կերպ. «Ուսումնասիրության առարկան ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրներն են՝ պայմանավորված ֆինանսական որոշումների կայացման վրա ազդող գործոններով ...»:
3. Աշխատանքը կդառնար համապարփակ, եթե 1.3 ենթագլխում, ուսումնասիրվեին և վերլուծվեին «Անձի տեսությունները»: Այսինքն, անձի ձևավորման գործընթացում ինչն է դրվել մարդու «Ես»–ի հասկացության մեջ: Անձի(քաղաքացու) ցանկացած որոշումների կայացման գործում շատ կարևոր են կարծրատիպերը, դիրքորոշումները, համոզմունքները և այլն:
4. Անձի(քաղաքացու) վարքագիծը ուշադրության կենտրոնում են պահել «Բիհեյվիորիզմ» և «Նեոբիհեյվիորիզմ» տեսությունների ներկայացուցիչները: Դիտարկելով տարբեր անձանց(տվյալ դեպքում ֆինանսական վարքագիծ դրսևորող սուբյեկտները)՝ նկատվել է, որ միևնույն արտաքին ազդակներին արձագանքում են տարբեր կերպ: Մարդու վարքագծի բաժանումը ռացիոնալ և ոչ ռացիոնալի թերի պատկեր է տալիս եզրակացություն կատարելու համար:
5. Գծապատկերներ 2.1–ի և 2.4–ի ուսումնասիրության ժամանակահատված են ընտրվել, համապատասխանաբար, 2015-2019 թթ. և 2009-2020 թթ.: Նշենք, որ դիտարկվող ցուցանիշները մեկը մյուսի հետ կապված են՝ խնայողություններ և ներդրումներ: Դիտարկվող ժամանակահատվածները պետք է լինեն

ժամանակագրական առումով հավասար, որպեսզի ճշգրիտ հետևություններ կատարվեն:

6. Ենթագլուխ 3.1–ում իրականացվել է հարցում: Նշված չէ, արդյո՞ք պահպանվել են հարցման արդյունավետությունը երաշխավորող սկզբունքները. հուսալիություն, ճշգրտություն, վալիդություն, միասնականությունը: Բացի այդ, ատենախոսության աղյուսակ 3.5-ում (էջ 78) հեղինակը ներկայացրել է ֆինանսական վարքագիծը, ֆինանսական գրագիտությունը, ֆինանսական սթրեսը, ֆինանսական բավարարվածությունը բնութագրող հարցերը: Չնայած որոշակի դժվարություններին՝ աշխատանքը կշահեր, եթե նշվածներից յուրաքանչյուրի վերաբերյալ ավելի շատ հարցեր ընդգրկված լինեին հարցաթերթիկում:
7. Հեղինակն ուսումնասիրել է սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը ավանդների ներդրման և վարկավորման վարքագծերի վրա, միաժամանակ նշել է, որ վարկավորման վարքագծի վրա ազդում են ժողովրդագրական, քաղաքական և այլ գործոններ (էջ 56): Վերլուծությունն ավելի բազմակողմանի կլիներ, եթե 2-րդ գլխում կատարված վերլուծությունում ժողովրդագրական և քաղաքական գործոնները նույնպես հաշվի առնված լինեին:
8. Մեր կարծիքով՝ աշխատանքն առավել կշահեր, եթե բնակչության ֆինանսական վարքագծի վերաբերյալ ՀՀ-ի օրինակով ստացված արդյունքներն այլ երկրներում ուսումնասիրությունների արդյունքների հետ համեմատական վերլուծության համատեքստում ներկայացվեին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողություններով հանդերձ՝ Էրիկ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հրապարակված 6 (վեց) գիտական աշխատանքներում:

Այսպիսով՝ Էրիկ Մայիսի Գրիգորյանի «Բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.06.2022թ., արձանագրություն թիվ 18):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտ. քարտուղար տ.գ.թ., դոցենտ **Ք. Բաղդասարյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտ. աշխատող գիտ. տ.գ.թ. **Տ. Փարսադանյան**

Տնտեսագիտ. թեկնածուներ Ք. Բաղդասարյանի և Տ. Փարսադանյանի ստորագրությունների «իսկությունը» հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր **Դ. Հարությունյան**

Կ.Տ.
13.06.2022 թ.